ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N1

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի
և
Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի միջև

ք.Երևան **«8» սեպտեմբերի 2009թ.**

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (ՀՀ ԿԳՆ ԳՊԿ)՝ ի դեմս նախագահ Սամվել Հարությունյանի, գործող կոմիտեի կանոնադրության հիման վրա և Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ)՝ ի դեմս նախագահ և գործադիր տնօրեն Հարություն Կարապետյանի, գործող հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմեր)՝ համաձայն ՀՀ ԿԳՆ ԳՊԿ և ԳԱՏԱՀ-ի միջև 2009թ. սեպտեմբերի 5-ին ստորագրված «Մտադրությունների հուշագրի», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի զարգացման և, մասնավորապես, ժամանակակից հետազոտական հմտություններով զինված երիտասարդ կադրերով գիտական համակարգի համալրման գործընթացին, ինչպես նաև աջակցել հանրապետության երիտասարդ գիտնականների ստեղծագործական աճին, Կողմերը պարտավորվում են կենտրոնացնել իրենց հնարավորությունները և հավասար մասնաբաժնով ֆինանսավորմամբ, մրցութային հիմունքներով դրամաշնորհներ տրամադրել Հայաստանի Հանրապետությունում բնական, ճշգրիտ և տեխնիկական գիտությունների բնագավառներում, պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշխատող երիտասարդ գիտնականներին:

1.2. Սույն պայմանագրի շրջանակներում Կողմերը նախատեսում են մրցութային հիմունքներով՝ իրարից անկախ կազմակերպված գիտական փորձաքննության արդյունքների համընկումով պայմանավորված, իրականացնել առնվազն երկու ենթածրագիր:

1.3. Ենթածրագրերի՝ ներառյալ դրանց շրջանակներում հատկացվող դրամաշնորհները, ընթացիկ և ֆինանսական համակարգումը դրվում է Կողմերի կողմից երաշխավորված երկուական ներկայացուցչից կազմավորված համակարգող խորհրդի վրա, որին տրվում է համապատասխան լիազորագիր:

1.4. Պայմանագրի 1.1. կետում նշված նպատակներին հասնելու Կողմերի մասնակցության ձևերն են.

ա. **ՀՀ ԿԳՆ ԳՊԿ**՝ համատեղ գործունեության (դրամաշնորհի) նպատակով նախատեսված ընդհանուր գումարի 50%-ի չափով տարեկան ներդրում՝ բյուջետային միջոցներից, որը կկազմի առնվազն 28 մլն. 200 հարյուր հազար ՀՀ դրամ, սեփական միջոցների հաշվին գիտական անկախ փորձաքննության կազմակերպում, դրամաշնորհի գործունեությունը համակարգող խորհրդի երկու ներկայացուցչի լիազորում,

բ. **ԳԱՏԱՀ**՝ համատեղ գործունեության (դրամաշնորհի) նպատակով նախատեսված ընդհանուր գումարի առնվազն 50%-ի չափով ներդրում՝ վստահաբար հնարավոր միջոցներից, որը կկազմի առնվազն 28 մլն. 200 հարյուր հազար ՀՀ դրամ, սեփական միջոցների հաշվին գիտական անկախ փորձաքննության կազմակերպում, դրամաշնորհի գործունեությունը համակարգող խորհրդի երկու ներկայացուցչի լիազորում, ինչպես նաև դրամաշնորհի ընթացիկ գործունեության սպասարկում:

1.5. Դրամաշնորհի շրջանակներում կատարված աշխատանքների (փուլերի) հաշվետվությունների ձևի և պարբերականության մասին հաղթողներին կհայտնվի լրացուցիչ:

2. Կողմերի պարտականությունները

2.1. ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն սույն պայմանագրի 1.3.ա կետով նախատեսված համաֆինանսավորման գումարը նախատեսում է ՀՀ պետբյուջեում:

2.2. ԳԱՏԱՀ-ը սույն պայմանագրով նախատեսված համաֆինանսավորման գումարը նախատեսում է իր դոնոր կազմակերպություններից ստացվող գումարներից՝ իր բյուջեում, որպես առանձին ծրագիր(եր):

2.3. Կողմերը սույն պայմանագրի ստորագրման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում որոշում են դրամաշնորհի համակարգող խորհրդում իրենց կողմից երկու ներկայացուցչի թեկնածությունը:

2.4. Կողմերը պարտավորվում են սույն պայմանագրով նախատեսված մրցույթների համար կազմակերպել գիտական անկախ փորձաքննություն՝ իրենց սեփական միջոցներով:

2.5. Սույն պայմանագրով նախատեսված գործունեության համար Կողմերի ներդրած միջոցները չեն կարող օգտագործվել որևէ կողմի վարչական ծախսերը փոխհատուցելու համար:

3. Ներդրումների կարգը և չափը

3.1. Սույն պայմանագրով նախատեսված ծրագրի իրականացման նպատակով Կողմերի ներդրումները կատարվում են առանձին-առանձին՝ մրցույթների հաղթողների բանկային հաշիվներին փոխանցումների միջոցով:

3.2. Դրամաշնորհների մասնաբաժինների տրամադրման ընթացքում Կողմերը, փոխհամաձայնեցված կարգով, կձգտեն պահպանել համաֆինանսավորման հավասար մասնաբաժինների հարաբերակցությունը:

3.3. Կողմերը կարող են համատեղ որոշում կայացնել լրացուցիչ ներդրումներ կատարելու կամ այլ ներդրողներ ներգրավելու մասին:

3.4. Սույն պայմանագրով նախատեսված համատեղ գործունեության համար յուրաքանչյուր կողմի ֆինանսական ներդրումը և ֆինանսավորման հատուկ պայմանները, եթե դրանք արտացոլված չեն կամ տարբերվում են սույն պայմանագրի պայմաններից, պետք է հստակեցվեն Կողմերի պատասխանատուների կողմից ստորագրված արձանագրություններով, որոնք կկազմեն սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4. Որոշումների կայացումը

4.1. Սույն պայմանագրի շրջանակներում համատեղ գործունեության արդյունավետությունը ապահովվում է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի և ԳԱՏԱՀ-ի լիազորված ներկայացուցիչների համատեղ որոշումներով, որոնք հիմված կլինեն Ծրագրի համակարգող խորհրդի առաջարկությունների վրա: Համատեղ որոշումներ կայացնելու լիազորությունը դրված է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի նախագահի, ԳԱՏԱՀ-ի կողմից՝ ԳԱՏԱՀ -ի նախագահ և գործադիր տնօրենի վրա:

4.2. Կողմերը պարտավորվում են սույն պայմանագրով նախատեսված մրցույթների հաղթողներին որոշել համատեղ՝ բացառապես գիտական անկախ փորձաքննության արդյունքների հիման վրա:

5. Վեճերի լուծման կարգը

Սույն պայամանգրի կապակցությամբ ծագաց վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերի լուծումը կատարվում է դատական կարգով:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

Սույն պայմանագրով պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրությունը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. Պայմանագրի գործողության ժամկետները

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է համատեղ գործունեության արդյունք հանդիսացող դրամաշնորհների ավարտից հետո ևս վեց ամիս:

7.2. Սույն պայմանագիրը կարող է երկարաձգվել կամ համալրվել նոր ծրագրերով՝ երկուստեք գրավոր համաձայնությամբ:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դա կատարված է գրավոր և ստորագրված է Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից:

8.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

9. Կողմերի իրավաբանական հասցեները

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ	ԳԱՏԱՀ
Երևան, Օրբելի եղբայրների 22	Երևան, Ազատության 26
ՀՎՀՀ 02512868	ՀՎՀՀ 00040233
h/h 900011033066	Զարգացման հայկական բանկ
	h/h 18100520048833 13
Նախագահ՝	Նախագահ և գործադիր տնօրեն՝
Ս. Հարությունյան	Հ. Կարապետյան